

## ԲԱՌԱԿՐԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՏԱԿԱՆ ՀՆԱՐԱՆՔԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Ն. Բ. ՊՈՂՈՍՅԱՆ

1830-ական թվականներին Վիեննայի Մխիթարյան հայրերը առաջինը գիտական շրջանառության մեջ դրեցին դասական գրաբարի գոյության փաստը: Լեզվաբանական բազմաբնույթի ու նաև խանդավառ այդ շարժման ակտիվ մասնակիցներից Հովսեփի Գաթրճյանը, Մադաթիա Գարազաշյանը, Ղևոնդ Հովնանյանը դասական հայերենի իրենց գյուտը ապացուցելու համար մի շարք լեզվական փաստարկներ էին բերում: Դասականը հետդասականից տարբերակող հատկանիշների շարքում մխիթարյանները 12-րդ կետում նշում են մեսրոպյան հայերենում բաղաձայնայնությունը՝ նույն բառով կամ արմատով կազմված բարդությունների տարածվածությունը, ինչպես օրինակ՝ «գօրացուցանէ զանգօրս մեծագօր գօրութեամբ» (Եզնիկ), «մեծապատիւ, մեծապարգէւ, մեծարեաց զնա» (Բուզանդ) և այլն<sup>1</sup>:

Գրաբարի հետագա քննողները ցույց են տվել, որ բաղաձայնայնությունների կրկնությունների լեզվական իրողությունը չի սահմանափակվում միայն V դարով, և ողջ միջնադարում հայ հեղինակները լիապես օգտագործել են լեզվաոճական այս գեղեցիկ հնարանքը: Վարազ Առաքելյանը մխիթարյանների նշված պնդումը համարում է «չատ թույլ կովան և մերժելի» և մի քանի օրինակով ցույց է տալիս, որ հետմեսրոպյան հայերենում նույնպես կարելի է հանդիպել բառակրկնությունների<sup>2</sup>: Մեր հետագա քննությունը ևս, կարծում ենք, զալիս է հաստատելու, որ նկարագրվող ոճական եղանակը հատուկ է ամբողջ գրաբարին՝ ընդհուպ մինչև ուշ միջնադարը:

Հայերենագիտության մեջ կրկնությունների ոճական հնարանքի բնութագրումները միօրինակ չեն, և կարելի է ասել՝ դրանց նկարագրությունը վերջնականապես կանոնավորված չէ: Նախ՝ բառագիտությանը մվիրված քննություններում կրկնական բարդություն (կամ՝ արմատակրկնություն) է ասվում մեկ բառի մեջ ամբողջական բառի կամ մի արմատի կրկնությունը, ինչպես՝ փայլվիլել, մեծամեծ, գունդազունդ, տնետուն: Էդուարդ Աղայանի տարբերակած կրկնավոր բաղադրությունները նույն բառի հնչյունափոխված կամ անհնչյունափոխ կրկնությունների տարբեր դրսևրումներն են, ինչպես՝ մեծ-մեծ, ատելով ատել, ունեցած-չունեցած, լեփ-լեցուն և այլն<sup>3</sup>: Հանդիպում են նաև կրկնավոր հարադրություններ, կրկնավոր բարդություններ ձևակերպումները, որոնք կազմվում են բոլոր խոսքի մասերին պատկանող բառերի միջոցով:

Ինչպես բառագիտության ոլորտում է, կրկնությունների ոճական արժեքին նվիրված վերլուծությունները նույնպես միասնական չեն: Էդ. Ջրբաշյանը

<sup>1</sup> Բառակրկնությունների այս և մյուս օրինակները քաղել ենք հիմնականում Ազաթանգեղոսի, Եզնիկ Կողբացու, Փավստոս Բուզանդի, Եղիշեի, Ղազար Փարպեցու, Գրիգոր Նարեկացու երկերից, Աստվածաշնչի գրաբար բնագրից: Այստեղ ներկայացնում ենք միայն հեղինակի համառոտված անվանումը:

<sup>2</sup> Տե՛ս օրինակ՝ Վարազ Առաքելյան, Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Եր., 1981, էջ 102-03:

<sup>3</sup> Տե՛ս Էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 229-235:

գեղարվեստական խոսքում կրկնությունների լեզվական իրողություններն ընդհանրացնում է բառական կրկնության մեջ՝ «երբ միտքն ավելի ցայտուն դարձնելու համար որևէ բառ կարող ենք երկու-երեք անգամ կրկնել»<sup>4</sup>:

Կրկնության ոճական հնարանքի տարատեսակներն առավել մանրամասն ներկայացրել է Պ. Պողոսյանը<sup>5</sup>: Նմանողությանը կազմվող ոճական արտահայտչամիջոցների շարքում նա թվարկում է՝ ա) բազմահոլովություն (հոգնահոլովություն), որը «միևնույն բառի՝ խոսքային փոքր հատվածում քերականական տարբեր ձևերով գործածվելու» հնարանքն է կամ «հոլովվող բառի տարբեր քերականական ձևերի կուտակումն է համառոտ խոսքում կամ խոսքի մի հատվածում» (էջ 163-164), օրինակ՝

**Սարերին կանգնած, սարերին սովոր / Սարերի երկիր Հայաստանս (Համո Սահյան):**

**Մարդու նկատմամբ մա՛րդ եղեք, մարդիկ (Պարույր Սևակ):**

բ) Նույնահիմքություն. «միևնույն հիմքից կամ արմատից կազմված բառերի արվեստավոր գործածությանը առաջացող ձևն է, որի մեջ արմատի կամ հիմքի կրկնությունը կրկնապատկության ուժգնություն է տալիս խոսքին» (էջ 155), օրինակ՝

Քեզ հարվածողին որպեսզի գարկես / Պիտի գարկողին իր գարկից գրկես (Պարույր Սևակ):

գ) Կրկնապատություն. այս դեպքում «բառը կրկնվում է շարահյուսական (մեծ թե փոքր՝ նշանակություն չունի) կամ բանաստեղծական միավորի (մեծ թե փոքր՝ նշանակություն չունի) սկզբում կամ վերջում» (էջ 105), օրինակ՝

Լուսնյակ գիշեր է, կավե կտոր է / Կավե սափոր է, կավե զավաթ:

Լացող սրտի մեջ լավի սարսուռ է / Լավի կարոտ է, լավի հավատ (Հ. Սահյան):

դ) Նախաբերություն. կրկնվող միավորը դրվում է տողերի սկզբում՝

Երբոր բացվին դռներն հուտ... / Երբոր ծիծառն ի բույն դառնա / Երբոր ծառերն հագնին տերև:

ե) Վերջաբերություն (վերջույթ՝ ըստ Լ. Եզեկյանի). Ուր էլ լինեմ չեմ մոռանա ես ողբաձայն երգերը մեր / ... գրքերը մեր / ... վերքերը մեր:

Պ. Պողոսյանի մատնանշած բոլոր տարատեսակները առատաբար հանդիպում են գրաբար բնագրերում: Բազմահոլովության օրինակ է՝ «զի բազում անգամ գրազում անզգամս տեսանեք զգոնացեալ» (Եզնիկ), նույնահիմքության՝ «... իրով զօրութեամբ զօրանայ այր հզօր, այլ Տէր տկարացուցանէ զհակառակութիւն» (ԱԹագ., Բ, 9), կրկնապատության՝

... Եւ խնդրուածովք ամենայն սրբոց:

Չի դու ստեղծեր զամենայն,

Եւ ի քէն եղեն ամենայնք,

Եւ դու տիրես ամենայնի,

Եւ քեզ փա՛ռք յամենեցունց (Մատեան, Բան ԳԶ) և այլն:

Կրկնությունների բոլոր տեսակները մեկ ընդհանուր և ամփոփ խմբում տեղավորելու միտում ունի նաև Լ. Եզեկյանը, որ նախընտրում է կիրառել պարզապես կրկնություն տերմինը. «Կրկնությունը ոճական, շարահյուսական այնպիսի դարձույթ է, որի դեպքում բառերի կամ բառակապակցությունների կրկնությանը խոսքին հաղորդում են հուզականություն, արտահայտչականություն»<sup>6</sup>:

<sup>4</sup> Էդ. Ջրբաշյան, Գրականության տեսություն, Եր., 1961, էջ 288-291:

<sup>5</sup> Տե՛ս Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, հ. II, Եր., 1991:

<sup>6</sup> Լ. Եզեկյան, Ոճագիտություն, Եր., 2003, էջ 362:

Դժվար չէ նկատել, որ բառերի ոճական կրկնությունների վերը ներկայացված, ինչպես նաև մյուս տեսակները (բազմահոլովություն, նույնահիմքություն, նախաբերություն, վերաջաբերություն, կրկնություն, բառական կրկնություն, հարակրկնություն, սրանց ավելացրած նաև՝ բաղաձայնայնության առձայնույթ, որոնք ևս հիմնականում կազմվում են նույն արմատի կրկնության շնորհիվ, բազմաշաղկապություն, բաղիյուսում, խաչակերպ և այլն) ունեն մեկ ընդհանրություն, նրանցում մեկից ավելի անգամ կրկնված է որևէ բառ կամ արմատ: Ընդ որում՝ միևնույն նախադասության մեջ միևնույն բառը, արմատը կարող են համդիպել տարբեր հոլովածներով, խոնարհված ձևերով, իբրև տարբեր բաղադրյալ բառերի հիմք, արմատ և այլն:

Քերականական այդ բազմերանգության մեջ խորամուխ չլինելու, ինչպես նաև տերմինային շփոթից զերծ մնալու նպատակով գրաբարի ոճական կրկնությունները մենք ամփոփում ենք մեկ՝ բառակրկնություն ընդհանուր եզրույթի մեջ<sup>7</sup>: «Բառակրկնությունը բառական միավորի կրկնությունն է», հստակ կերպով սահմանում է Հայերենագիտական բառարանը:

**Բառակրկնությունն** այսպիսով՝ չափածո կամ արձակ ստեղծագործության որևէ նախադասության կամ բանաստեղծական մեկ միավորի մեջ միևնույն բառի կամ արմատի ոճավորված կրկնությունն է: Իբրև բառակրկնության անդամ է դիտվում կրկնվող արմատը, բառը կամ բառի բաղադրիչը: Բառակրկնություն պայմանակող կառույցների ոճական արժեքի վրա շեշտադրումը կենտրոնացած լինելու պատճառով նրանց շարահյուսական առանձնահատկությունները, անդամների բառակազմական կաղապարներն ու ձևաբանական իրողությունները անտես ենք առնում:

Մեկ դիտողություն. գրաբարից քաղված բառակրկնությունների օրինակներում չենք ներառել միտքը սաստկացնելու համար բառային միավորների՝ հարակրկնության, վերջույթի (կամ վերջաբերության), կրկնապատության երևույթները, ինչպիսիք են՝

«Աստուած, որ ամենայնի լոյս է, ամենայնի լուր է, ամենայնի տես է, ամենայնի բան է, ամենայնի զօյութիւն է, ամենայնի իմաստութիւն է... երեւեր նոցա...» (Ազար):

Հարակրկնության մնան երևույթներն առատապես համդիպում են Նարեկի էջերում (Պ. Պողոսյանն այն ուղղակի անվանում է «նարեկյան ոճական հնարանք»):

...Յամենայնի իշխես, ամենայնի բաես,  
Ամենայն ուրեք հասանես,  
Ամենից բռնութեանց յաղթես,  
Չամենայն կարծրութիւն փշրես,  
Չամենայն ընդդիմահար վանես,  
Չամենայն խստութիւն վատնես,  
Չամենայն սրացեալ ընդդոտնես,  
Չամենայն դառինս անուշես,  
Չամենայն դժուարամոքելիս քաղցրացուցանես,  
Չամենայն պարտս շնորհես,  
Չամենայն յանցանս թողուս (Մատենան, Բան ԻԸ, Ե):

<sup>7</sup> Տե՛ս Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 507:

<sup>8</sup> Պ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 147:

...  
Այլ քեզ՝ արարչիդ հոգուց եւ մարմնոց  
Ամենայն ինչ լուսաւորեալ է,  
Ամենայն ինչ առաջի է,  
Ամենայն ինչ գրեալ է,  
Ամենայն ինչ դիւրին է,  
Համայնն հնարաւոր է (*Մատեան, Բան ԽԳ, Բ*):

...  
**Ընդէ՞ր** պատկառանք անհամարձակելիք քոյին դիմացոյ նպաստեցեր,  
**Ընդէ՞ր** զինեցար ընդդէմ քո ներհակ, ո՛վ ընդունարան խելագարութեան,  
**Ընդէ՞ր** որսացար ի ծուղակ մահու՝ թողեալ զարահետն վստահութեան,  
**Ընդէ՞ր** կարթիւ պատրանաց ածար հաղորդ մարմնոյ կենդանարարին  
(*Մատեան, Բան ԽԶ, Դ*):

Իբրև կանոն, հարակրկնության մման դրսւտրումների մեջ բառերը մնում են անփոփոխ (մեր նշած օրինակներում՝ ամենայն, ամենայնիւ, ընդէր): Մինչդեռ բառակրկնություններ ստեղծող հեղինակները միևնույն բառը կամ արմատը կիրառում են բազմազան փոփոխված, բաղադրված, հոլովված և այլ ձևերով, դրանց դիտումնավոր կրկնությանը են խոսքը դարձնում ազդու և արտահայտիչ:

Ինչպես վերը նշեցինք, բառակրկնությունների շարահյուսական առանձնահատկությունների ու կրկնվող անդամների ձևաբանական ու բառակազմական կառուցվածքի վրա կանգ չենք առնում: Իբրև դասակարգման փորձ՝ առանձնացնում ենք բառակրկնությունների երկանդամ, եռանդամ, քառանդամ, հնգանդամ տեսակները: Ընդ որում՝ երկանդամ բառակրկնությունը վերապահությամբ պետք է ներառել այս շարքում, քանի որ մախ՝ այդպիսի կառույցներն անհաշվելի շատ են հանդիպում գրաբարյան երկերում, և հետո՝ հաճախ կարող ենք գործ ունենալ պատահական կրկնությունների հետ:

*Ս. Գիրք.* «Յայնմ հետև սկսաւ Յիսուս ցուցանել աշակերտացն. թէ պարտ է մնա երթալ յերուսաղէմ եւ բազում շարչարանս շարչարել եւ անարգել ի քահանայապետից» (*Մատթ., ԺԶ, 21*): «...Ձի մկրտեցան ի մկրտութիւնն Յովհաննու» (*Ղուկ., Է, 29*):

*Եզնիկ.* «Որ զամենայն գոր արար գեղեցիկս արար. զբանաւորս եւ զանբանաւորս. զմտաւորս եւ զանմտաւորս. զխօսունս եւ զանխօսունս. զասունս եւ զանասունս»: «Ի լինելն եւ ի գոյանալ եկին ի չգոյէ եւ ի գոյէ որպէս երկինք վերինք եւ որ ինչ յերկինս. եւ երկինք երեսելիք որ ի ջուրք. եւ երկիր. եւ ի մնանէ եւ ի մնա. յորմէ ամենայն եւ ինքն ոչ յումեքէ»: «Մինչ չեւ բնաւ էր ինչ. ասեն. ոչ երկինք եւ ոչ երկիր եւ ոչ այլ ինչ արարածք՝ որ յերկինս կամ յերկրի...»:

*Փալատու.* «...Առանց իրիք կապելոյ՝ սքանչելապէս կապեալ լինէին»:

*Եղիշէ.* «Եւ թողեալ զարարիչն՝ արարածոցս գերկրպագութիւն մատուցանէր»:

«Եւ աղօթականքն անդադար լինէին յաղօթսն իւրեանց. եւ պահողքն ճգնէին ի պահս իւրեանց»: Չեռագրելից մեկում պահպանվել է սրա մեկ այլ տարբերակը՝ «եւ պահողքն պահէին ի պահս իւրեանց»:

Երկանդամ բառակրկնությունների դրսւտրումներից մեկը գրաբար հատընտիրը կազմող Թռոնյանն անվանում է կրկնարմատ, նույն երևույթը բանասեր Հ. Ա. Վարդանյանն անվանում է կրկնամուն՝ բնութագրելով հետևյալ կերպ. «Ցանցառ չէ դասական մատենագրութեան մէջ գործածութիւնը այն ածականներու, որոնք փո-

խանակ իրենց սեփական նշանակութեամբը գոյականներ որակելու, մասնաւոր ու խնամուած մախասիրութիւն մը ցոյց կու տան առընթեր արմատ գոյականը կցելու անգամ մըն ալ իրենց ծայրը, ու այսպէտս կը ջանան կարծես ներքին աղերս մը հաստատել ածականի եւ գոյականի միջև»<sup>9</sup>: Խոսքը վերաբերում է բարենշան նշան, մեծասաստ սաստ տիպի կրկնություններին: Հ. Ա. Վարդանյանի ներկայացրած և մատենագրությունից մեր քաղած կրկնաւորումների (կամ կրկնարմատների) կիրառության տասնյակ դեպքեր կան, ինչպես՝

«Եւ ահա տեսիլ նորա զնստագոյն իցէ քան զնորթն, եւ ի նմա մագ աղումագ խարտիշացեալ» (*Ղեւտ., ԺԳ, 30*):

«Եւ ամենայն հանդերձ եւ ամենայն անօթ մաշկեղէն եւ ամենայն գործ մագագործ սրբեսցի եւ զամենայն կահ փայտակերտ սրբեսցիք» (*Թուոց, ԼԱ, 20*):

«Եւ արասցես տախտակ մի հիւսկէն վերջիւք, գործ շղթայագործ յոսկոյ սրբոյ» (*Ելք, ԻԸ, 22*):

«Ձայլ պահ գիշերապահ շուրջ զնոքօք զգուշութեամբ բիրազգի ածէին» (*Գ Մակար., Ե, 3*):

«Թէպէտ և զգործ չարագործութեան գործեն՝ զանուն չարագործութեանն յանձն ոչ կամին առնուլ» (*Եզնիկ*):

Կրկնարմատ կառույցների մմանատիպ այլ օրինակներ են.

անբան բան	հրամանական կամք	որդեսեր սեր
անբարի բարք	հրամանակարգ կարգ	չարախորհուրդ խորհուրդ
առնակին կին	ծիւնաջուր ջուր	չարագործ գործ
աւագափող փող	ճարտարաբան բանք	չարակեղ կեղ
բարենշան նշան	ճարտարադէտ դէտ	չարածայն ծայն
բռնամարտիկ մարտիկ	մագագործ գործ	չարափուշ փուշ
գեղեցկանուն անուն	մատաղատունկ տունկ	չարչարիչ չար
գիշերապահ պահ	մեծասաստ սաստ	չարագործ չար
դրօշագործութեան գործ	մեղմագնաց գնացք	պատենագէն գէն
դառնադեղ դեղ	մթագոյն գոյն	ջերմակաջուր ջուր
երագաթել թել	մոլաթուզ թուզ	սայրասուր սուր
երկայնակեան կեանք	մեծափոյթ փոյթ	սեւագոյն գոյն
երկայնատարած տարած	մեծագանձ գանձ	սպառագէն գէն
ժանդամահ մահ	մեծաշահ շահ	ստաբան բանք
ինքնական կամք	մանրատունկ տունկ	ստագիր գիրք
խառնաբանջար բանջար	մանրացօլ ցօլ	վերնակողմն կողմն
խորածոր ձոր	մաշկաթել թել	տարածամ ժամ
ծնկակապ կապ	յտակամիտ միտք	տիկին կին
կարճագգեաց զգեստ	մանրագիր գիր	քաղցրաբան բան
հասարակակշիռ կշիռ	մաւագնաց գնացք	քաջադէտ դէտ
հասարակապատիւ պատիւ	շղթայագործ գործ	քաջաթոյր թոյր
հարաւակողմն կողմն	շուշանագործ գործ	և այլն:
	ոգիակողմն կողմն	

Ներկայացվող բառակրկնությունների օրինակների մի մասը քաղված են Սուրբ Գրքի գրաբար բնագրից: Բառախաղերը՝ իբրև բառակրկնությունների հիմնական

<sup>9</sup> Հ. Ա. Վարդանեան, Դասական հայերենի յատկութիւններէն, «Հանդէս ամսօրեայ», 1923, № 1-2, էջ 36-48:

աղբյուրներից մեկը, լայն տարածում ունեին Աստվածաշնչի եբրայական բնագրում, որից էլ շատ ձևեր քարգմանաբար անցել են հայերենին ու ազդել են հայ հեղինակների լեզվի վրա: Եբրայական գրվածքներում ընդունված լեզվական հնարանքներից է եղել նմանաձև տառերի կամ համահունչ վանկերի կրկնությամբ մըտքի սաստկացումը: «Այս տեսակ բառախաղերը Սուրբ Գիրքին մեջ միտքի չնչին խաղեր չպետք է համարիլ: Անոնք պատշաճօրէն գործածուած նմանութիւններ ու հակադրութիւններ են, ու այդ կերպով վայելչութիւն մը կու տան լեզուին ու կը տպատրեն յիշողութեան մէջ»<sup>10</sup>: Նման օրինակները բազմաթիվ են:

«Գաղ հինի ելցէ, եւ ինքն ելցէ հինիս զհետ նոցա» - եբրայերեն այս միտքը հնչում է նման վանկերի կրկնությամբ՝ «Գաղ գեղուդ եղուդեննու ուեհ ու եագուդ ակեք» (*Մենդ., ԽԹ, 19*): «Հարցք գողցունէ Երուսաղէմ» - եբրայերենում նույն միտքը հնչում է այսպէս՝ «Շասալու շեւոմ Երուշալայիմ» (*Մաղմոսք, ՃԻԱ, 6*): «Եղիցի խաղաղութիւն (շեւոմ) ի գօրութեան քում եւ շինութիւն (շալուսահ) յաշտարակս ամուրս քո» (*Մաղմոսք, ՃԻԱ, 7*): «Եթէ ոչ հաւատայցէք եւ ոչ ի միտ առնուցուք» - եբրայերեն՝ «Իմ տօ տաամին ու, կի յօ տամէնու» (*Եսայի, Է, 9*): «Սիոնի» հեղինակը պնդում է, որ Նոր Կտակարանում բառախաղերը քիչ են Հին Կտակարանի համեմատությամբ:

Միջնադարի հայ հեղինակների ստեղծագործություններում բառակրկնությունների գեղեցիկ օրինակներ կարելի է գտնել տասնյակներով: Ներկայացնում ենք տարբեր հեղինակների երկերից քաղված մի փունջ, ինչպես նշեցինք՝ պայմանականորեն դասակարգված բառակրկնությունների եռանդամ, քառանդամ, հնգանդամ խմբերում:

#### **Եռանդամ բառակրկնություններ**

*Ս. Գիրք.* «Չի ամենայնի որ ունիցի՝ տացի եւ յաւելցի. եւ որ ոչն ունիցի. եւ զոր ունիցին՝ բարձցի՝ ի նմանէ (*Մատթ., ԻԵ, 29*): «Որով չափով չափէք՝ չափեսցի ձեզ» (*Մատթ., Է, 1-2*): «Մարդ բարի ի բարի գանձուց սրտի իւրոյ հանէ զբարիս. եւ մարդ չար ի չար գանձուց սրտի իւրոյ հանէ զչարիս» (*Մատթ., Ժբ, 35*): Բարի մարդը իր սրտի բարի գանձերից հանում է բարի բաներ, իսկ չար մարդը իր սրտի չար գանձերից հանում է չար բաներ:

*Եզնիկ.* «Եւ զայնպիսի աստուածս ոչ առ աստուածս պարտ է ունել, այլ առ չաստուածս»: «Եթէ այնպէս իցէ, եւ ոչ Չբուանն իսկ էր. եւ մեծի ծաղու արժանի է. զի չէրն չէին վասն չէին յաշտ առնէր»:

*Բուզանդ.* «Ապա ետես քագատրն Կոստանդիանոս զհրեշտակն սպասատր երեսացն Յակոբայ, եւ անգաւ առաջի ոտից նորա, եւ մեծապատիւ մեծապարզեւ մեծարեաց գնա» (*Երրորդ դպրութիւն, Գլ. Ժ*):

*Նղիշե.* «Որոց զոգիսն ձեր ի ձեզ քաղեալ՝ հանեալ է զանապականդ յապականութիւն, եւ զապականելի մարմինդ գէշաքարշ արարեալ իբրեւ զազիր մեռելոտի ի բաց ընկեցեալ»:

*Ղ. Փարպեցի.* «Հանդերձս ինչ եւ ոչ ծաղկաբոյս գոյնս կարծեցուցանեն սիռեալքս պարարտաբոյսք եւ պարարտաբօտք, պարարտահամք»:

*Յանախասպատում ճառք.* «Հարք բարեսէրք եւ բարեգութք եւ բարեխոհ լիցին՝ նմանեալք հօրն երկնաւորի»:

*Ս. Պատարագամատույց.* «ԶՔոյս ի քոյոց քեզ մատուցանեն, ըստ ամենայնի եւ յաղագս ամենեցուն»:

<sup>10</sup> Բառախաղերը Սուրբ Գրոց մեջ, «Սիոն», Երուսաղէմ, 1937, էջ 145, հեղինակ՝ Մ.Ե.Ն (=Մ. Եպս. Ներսիսյան): Այս հոդվածից ենք քաղել եբրայերենի օրինակները:

**Քառանգամ բառակրկնություններ**

*Եզնիկ.* «զի որոյ մասն ինչ արարած է. յայտ է եթե նա ամենեւին իսկ արարած է. եւ որոյ մասնն չէ արարած. նա բնաւ իսկ չէ արարած»:

«Եւ որ որ ոչ կամօք ինչ գործէ. ընդ այնք պատիժ չպարտի կրել. բայց որ կամօք կարող է գործել. և գործ ինչ յոռութեան գործիցէ. յիրաւի պատժի» (կրկնված է նաև կամօք բառը):

*Ս. Պատարագամատոյց.* «Յամենայնի *օրհնեալ* ես, Տէր, *օրհնենք* զքեզ, զովնք *զքեզ*, զոհանամք զքէն, աղաչենք *զքեզ*, Տէր Աստուած մեր»:

Փ. Բուզանդի երկից մեջբերվող հաջորդ հատվածը վկայում է, որ բառակրկնությունների սահմանը տարածվում էր նաև գրաբարի խոսակցական շերտերի վրա, ինչպես՝

«Արբեցաւ (Արշակն), հպարտացաւ եւ ասէ. Վայ ինձ Արշակայ. ա՞յս ես եւ այս, եւ յայսմ չափու եւ այս անցք անցին ընդ իս»:

**Հնգանգամ բառակրկնություններ**

«Տէր ցրուէ զխորհուրդս հեթանոսաց, անարգէ Տէր զխորհուրդս ժողովրդոց, եւ արհամարհէ Տէր զխորհուրդս իշխանաց. խորհուրդ Տեառն յախտեան մնայ, խորհուրդ սրտի նորա ազգէ մինչև յազգ» (*Սաղմ., ԼԲ, 10-11*):

«Մի՛ դատիր զի մի՛ դատիցիք.զի որով դատաստանաւ դատիր՝ դատելոց էք» (*Մատթ., Է, 1-2*):

*Եզնիկ.* «Եւ եթե. որպէս դանդաչենն. բազում աստուածք ի միոջէ Աստուծոյն ելեալ իցեն. ընդէ՞ր ոչ բազում աշխարհք իցեն. եւ ոչ բազում երկինք եւ ոչ բազում արեգակունք՝ եւ ոչ բազում երկիրք»։ «Եվ այլ ևս չարագործքն. քեպէտ և գգործ չարագործութեան գործեն՝ զանուն չարագործութեանն յանձն ոչ կամին առնուր»։ «Բայց երկինս եւ երկինց երկինս յայն սակս գտանենք ի գիրս. զի յԵբրայեցոց լեզու երկին չմարթի ասել. որպէս եւ ոչ յասորի լեզու՝ ջուր կամ երկին»:

Մի շարք դեպքերում հեղինակների ստեղծած բառակրկնությունների հրաշալի օրինակներն անհնար է և իմաստ էլ չունի տեղավորել բառանգամ կամ հնգանգամ պայմանական դասակարգումների մեջ։ Դրանք տարբեր արմատների զուգակցված բառակրկնություններ են, որոնց մեջ միաժամանակ կրկնված են մեկից ավելի արմատներ։ Այդպիսի ընտիր նմուշները նույնպես առատ են մատենագրության մեջ, ինչպես Եզնիկի հետևյալ օրինակն է.

«Եւ ոչ վիշապք գտոհմականս արդեանց կրեն. և ոչ գրաստ գոյ նոցա՝ եթե զարդինս ի կայոց ուրեք կրիցեն. և ի գուր է կալ՝ կալն ասել ումեք ի կալս՝ և ոչ ա՛ռ ա՛ռ։ Չի վիշապն որ ինքն գրաստ է. այնու զի անասուն և անխօսունն է. զի ա՞րդ՝ որ ինքն գրաստ է՝ գայլ գրաստ վարիցէ» (փոքրիկ հատվածում գրաստ բառը կրկնված է 4, կալ արմատը՝ 4, ա՛ռ շեշտված ձևը՝ 2 անգամ):

*Եղիշե.* «Եւ արդար դատաւորաւք վրէժ առնուն մահու չափ. իբր ոչ եթէ բարի Աստուծոյ դատաւորք իցեն բարեգործ. եւ չարին չարագործ. զի բազում անգամ է՝ զի ի բարի մարդկանէ չարք լինին. եւ յետոյ ի չարագունից անտի կատարելագոյն բարիք»:

*Ղ. Փարպեցի.* «... Յիշեցուցանել զբանն սուրբ Հոգոյն, զոր մայրն մարգարէին Սամուէլի ցնծութեամբ քաջալերեալ ի Քրիստոս՝ երգելով ասէր, թէ «Մի՛ պարծեսցի հզօրն ի զօրութեան իւրում, եւ մի՛ պարծեսցի մեծն ի մեծութեան իւրում, այլ որ պարծելոցն իցէ՝ յԱստուած պարծեսցի»:

Ներկայացված այս հատվածը Փարպեցին մեջբերում է Ս.Գրքի Երեմիա Թ, 23-24-ից, որում բնագիրն ունի հստակ տեսքը. «Այսպէս ասէ Տէր. Մի՛ պարծեսցի իմաստունն յիմաստութիւն իւր, եւ մի՛ պարծեսցի հզօրն ի զօրութիւն իւր, եւ մի՛ պար-

ծեսցի մեծն ի մեծութիւն իւր: Այլ յայն պարծեսցի որ պարծիցի՝ իմանալ եւ ճանաչել զիս»:

Դժվար չէ նկատել, որ բառակրկնություններով խիստ հարուստ է հատկապես Եզնիկի երկը: Իսկ նրա հետևյալ հատվածը բառանդամ և նույնիսկ վեցանդամ կրկնությունների զուգակցումների մի հոյակապ լեզվական կոթող է, որն անհնար է ընթերցել առանց ներքին աղեկոծության.

«Այլ կենդանի է եւ աղբիւր կենդանութեան. տայ ամենայնի կենդանութիւն, եւ ինքն կայ լի եւ յամսապտ կենդանութեան.

եւ զարացուցանէ զանգարս մեծագար զարութեամբ. եւ ինքն ոչ թերանայ ի զարացուցիչ զարութենէն.

եւ պարգեւէ զհտուրքիւն ամենայն անգիտաց. եւ ինքն բաւանդակ ունի յինքեան զամենագէտ զհտուրքիւնն.

եւ բոխէ յամենեայն զանպակաս իմաստութիւնն. եւ ինքն մնայ անխախտ յամենահնար իմաստութեանն»:

Բառակրկնությունների բոլոր դրսևորումներն ու տեսակներն իրենց կատարելությանն ու լրումին են հասնում և երկնառաք պատկերներ ստեղծում Գրիգոր Նարեկացու «Մատենամում»: Խիստ առատ լինելու պատճառով ներկայացնենք ընդամենը մի քանիսը, ինչպես օրինակ՝ ամենայն բաղադրիչով կազմված բառակրկնության մի քանի օրինակներ.

Որ ունիս զամենայն, եւ ի քէն է ամենայն (Բան Դ, Դ):

Ե՛ս ամենայնն, եւ յի՛ս ամենեցունն (Բան ՀԲ, Գ):

Ձի յայսմ ամենայնի յամենայնի՝ ծանիցի քո աստուածութիւնդ (Բան ԼԳ, Ը):

Դու սկիզբն եւ լրումն ամենայնի / Եւ ի քէն է ամենայն (Բան ԽԲ, Բ):

...Համայնդ յամենայնում, ամենայնի ստացեալ քեզ փառս, Ամէն (Բան ԻԳ, Դ):

Որ ունիս զամենայն, եւ ի քէն է ամենայն,

Եւ քեզ փա՛ռք յամենեցունց (Բան Դ, Դ):

Այո՛, առ ամենեսեան ամենայնի յամենայնի կարող ես, զքած (Բան ԻԵ, Ե):

Եւ զամենայնն յամենայնի ամենայնի քո կարողութեամբդ

Չառաջին չարիսն, միջնովքն եւ վերջնականաւքն, թո՛ղ ինձ... (Բան Ծ, Գ):

Այլ արմատներով ու բաղադրիչներով կազմված բառակրկնությունների մի քանի օրինակներ Նարեկից. Եւ զիա՛րդ ասացից անձին իմում մարդ գրեալս ընդ անմարդիս (Բան ԻԱ, Դ):

Ընկա՛լ, բարեգութ: Որք են բարիք, բարեգործեալք ի բարերարեդ (Բան ՉԱ, Ա):

Որ ի մեծէն Աստուծոյ ողորմեալ մեծապէս՝

Ի մեծագունիցն վկայեցաւ (Բան ԺԱ, Գ):

«Բարետաւիդ ողբերգարկութեանց, բարացուցական բամբռան բառացի բարանութեանց» (Բան ՂԲ, Է):

Եւ քեզ միայնոյ պատճառիդ

Եւ միոյդ ի միոյ պատճառէ

Եւ ունողիդ զպատճառ միոյ ... (Բան ԼԲ, Ձ):

Հատուկ պետք է նշել Գրիգոր Նարեկացու հետևյալ տողերը.

Եւ քեզ միայնոյ՝ սկզբանդ եւ անսկզբանդ,

Ընդ սկզբանդ եւ սկզբնաւորիդ սկզբանց,

Սուրբ Երրորդութեանդ եւ միւսն աստուածութեանդ

Փա՛ռք եւ իշխանութիւն յաւիտեանս: Ամէն (Բան ԽԸ, Ը):

Այս հատվածի մասին ծանոթագրություն ունի «Մատենան»-ի քննական հրատարակությունը (էջ 1056, ծան. 23), ըստ որի՝ բանաստեղծն ակնարկում է Հորը՝ «սկզբանդ եւ անսկզբանդ», Որդուն՝ «ընդ սկզբանդ», Սուրբ հոգուն՝ «սկզբնաւորիդ



սկզբանց»։ Գ. Ավետիքյանը նկատել է, որ այս հատվածը մասամբ հիշեցնում է Գ. Նազիանզացու՝ երեսուներկուերորդ ճառում Ս. Երրորդությանը տված բնութագրումը. «Որ անսկիզբն է սկիզբն է որ ընդ սկզբանն մի Աստուած է... անսկիզբն՝ Հայր, սկիզբն՝ Որդի, ընդ սկզբանն՝ Հոգի Սուրբ» (*տես Նարեկյուծ, էջ 249, ծան. 52*):

Բառակրկնությունների գեղարվեստական պատկերները նույն ուժգնությունն ունեն նաև Գ. Նարեկացու տաղերում:

Էն էին անէին

Եղանի էակ եղելի անեղիցն աներբից (*«Տաղ Համբարձման»*):

...

Էին աջոյ աջոյ ձեռին,

Աջոյն իւրոյ աջ ընդ աջմէ

Հար յահեկէ լուսոյն փառաց:

...

Ի սիրոյ սէր ծանուցեալ,

Սիրաբողոքոջ տարփմամբ լցեալ,

Սիրով ընդ սէր միաբանեալ:

...

Եկայք նոր մեք նորագուարճ,

Վառ ի վառեալ, տիպ ծալ ի ծալ,

Թըփոյն տերեւ յարիմեսցուք (*«Տաղ ծննդեան»*):

Նամանավանդ Նարեկացու հզոր ազդեցությամբ ոճական այս հնարանքը տարածվում է միջնադարյան չափածոյում, այնպես որ բառակրկնությունները հատուկ են ողջ միջնադարյան մեր գրականությանը՝ ընդհուպ մինչև ուշ միջնադարը: Ներկայացնենք նման մի քանի օրինակներ:

**Ներսես Շնորհալի .**

«Նոր ծաղիկ ցուցաւ ի նորատունկ բուրաստանի

Նոր արեւ հարալի

Նորագուարճ առաւատի»<sup>11</sup>:

...

«Արփենւոյն արփոյն տարփրմամբ,

Արփոյն, ը՛, տարփմամբ անդ... » (*«Տաղ յարութեան»*):

...

«Փառք նոյն ի նոյն ի նոյն, ը՛» (*ն.տ.*):

**Գրիգոր Տղա (կաթողիկոս 1173-1193).**

Ձի՞նչ լոյս եւ լոյս, զի՞նչ լոյս եւ անլոյս<sup>12</sup>:

Իցեն զի ոչ գիտեն եւ գիտեն զի ոչ գիտեն:

Իցեն զի ոչ գիտեն եւ ոչ գիտեն զի ոչ գիտեն:

Իցեն զի ոչ գիտեն եւ գիտեն զի գիտեն<sup>13</sup>:

**Ներսես Մոկացի<sup>14</sup>.**

Նոր պարու պարապետիս

Պարաւորք լինել համաձայն... (*«Ներբողեան գովեստի»*):

<sup>11</sup> Ներսես Շնորհալի, Տաղեր եւ զանձեր, Եր., 1987, էջ 9:

<sup>12</sup> Այս հատվածը բաղել ենք՝ Հ. Աճառյան, Հայոց անճանաչումների բառարան, Եր., 1942, հ. Ա, էջ 562:

<sup>13</sup> «Արարատ», Ս. Էջմիածին, 1892, էջ 1097:

<sup>14</sup> Ներսես Մոկացի, Բանաստեղծություններ, Եր., 1985, էջ 28:

**Պեպրոս Ղափանցի<sup>15</sup>.**

Ի սէր սիրոյդ, ձեռն սիրով վառված եմ («*Դարձյալ գլոստանդուպօլտյ*»):  
Ջիս՝ անմնանս և նմանիս մարդանման արա՛, Տէր իմ («*Խնդիր եւ աղա-  
չանք*»):

Չարասեր չարդ միշտ ընդ չարաց, յոժ վաղվադես առ ի չարիս:

Բանըն բանի ըզբանաւորս ա հ ա ց ու ց ա ն է,

Մըտաւորաց բանայ յայտնի, ա հ ա՛ ց ու ց ա ն է («*Խրատ յորդորան*»):

Պետրոս Ղափանցու հետևյալ քառյակը գեղարվեստական բարձր արժեքով  
օժտելուն անշուշտ մեծապես նպաստում է բառակրկնության հնարանքը.

Հոգիք յոգունք, հոգօք հոգնին,

Վասըն բանից նոր ոգելոյ,

Եւ ո՛չ հոգան գիողիս իրեանց՝

Ի հնութենէ նորոգելոյ (էջ 178):

**Պաղտասար Դպիր<sup>16</sup>.**

Սիրով սիրեցելոյդ սիրապես սիրահարեցայ (էջ 48):

Փրկիչ, փրկեա՛ ի փորձանաց, որ փրկողդ ես փորձութեանց (էջ 70):

...

Էից հանուրց էարար է

Էացուցես զանձն իմ՝ յոր չէ (էջ 80):

...

Եցոյց թէ զո՛յ իմաստ մըտաց,

Իմաստուրաց իմաստակաց (էջ 100):

Հարկ է նշել, որ մեր լեզվի անսպառ զանձարանի՝ զրաբարի գեղեցիկ հնա-  
րանքներից մեկի՝ բառակրկնությունների օրինակները բնավ չեն սահմանափակ-  
վում մեր ներկայացրածով: Դրանք մարգարտահատիկների մման շաղ են տրված  
ողջ միջնադարյան գրականության մեջ, որոնք ի մի հավաքելու և ներկայացանելու  
անհրաժեշտություն ունեն: Սակայն, կարծում ենք, ներկայացրածն էլ բավական է  
համոզված ասելու, որ սկիզբ առնելով դասական հայերենից՝ բառակրկնություննե-  
րի լեզվական այս երևույթը հետագա դարերում ունեցավ իր ոչ պակաս նշանակա-  
լի շարունակությունն ու զարգացումը՝ ոճականորեն հարստացնելով ու զարգացնե-  
լով զրաբարյան գեղարվեստական, պատմագրական ու նաև քարզմանական երկե-  
րը:

**Н. Б. ПОГОСЯН - *Стилистический прием словоповтора в зрабаре.* -**

В средневековой армянской литературе очень часто встречаются довольно изящные повторы слов внутри одного предложения. Такое обилие словоповторов в средневековых источниках дает автору статьи основание утверждать, что мы имеем здесь дело с распространенным в те времена стилистическим приемом. В статье приводятся десятки примеров словоповтора из литературы V – XVIII веков и делается попытка их классификации.

<sup>15</sup> Պետրոս Ղափանցի, Բանաստեղծություններ, Եր., 1990:

<sup>16</sup> Պաղտասար Դպիր, Տաղիկներ, Եր., 1985: